ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՀ-ՄԱԾՁԲ-22/83-Պ

ք. Երևան

25-ը նոյեմբերի 2022թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գործադիր տնօրեն Հ. Մովսիսյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

«Ինդիվիդում կաստինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Ս. Հարությունյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

(այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),

ստորագրեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1. Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի առաջադրանքով մատուցել սույն Պայմանագրի 1.2. կետի պահանջներին բավարարող հեռուստալսարանի և դերասանների (այսուհետ՝ Դերասաններ) ապահովման ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել պատշաճ մատուցված Ծառայությունները և վճարել դրանց դիմաց սույն Պայմանագրով նախատեսված կարգով, չափով և ժամկետում:

1.2. Կողմերն արձանագրում են, որ կոնտենտ(ներ)ի նկարահանումների մասնակցող Դերասաններին Կատարողի ներկայացմամբ հաստատում է Պատվիրատուն:

1.3. Կատարողը երաշխավորում է, որ ընդհանուր կանոնի համաձայն պահանջվող հեռուստալսարանը ներառող հանդիսատեսը նկարահանումներին կներկայանա եթերային պատշաճ տեսքով՝ կոկիկ և խնամված արտաքինով, մաքուր և ոչ վուլգար հանդերձանքով: Բոլոր դեպքերում, Կողմերը համաձայնում են, որ կախված նկարահանվող հեռուստահաղորդման թեմատիկայից, ի լրումն ընդհանուր կանոնի, Պատվիրատուն իրավասու է ներկայացնելու հեռուստալսարանը ներառող հանդիսատեսի արտաքինին և հանդերձաքին վերաբերող որոշակի ողջամիտ պահանջներ:

1.4. Կողմերն արձանագրում են, որ Կատարողի կողմից հեռուստահաղորդ(ումների)ման և կոնտենտ(ներ)ի նկարահանումներին համապատասխան Հեռուստալսարանի և Դերասանների ներգրավումը չի ենթադրում նկարահանվող կոնտենտ(ներ)ի և/կամ հեռուստահաղորդ(ումների)ման նկատմամբ հեղինակային իրավունքների փոխանցում կամ որևէ այլ կերպ այդպիսի իրավունքների ծավալի փոփոխում:

1.5. Կատարողը երաշխավորում է, որ Դերասաններից ձեռք կբերի կոնտենտ(ներ)ի շրջանակներում վերջիններիս նկարահանելու համար ՀՀ օրենսդրությամբ պահանջվող բոլոր համաձայնությունները իսկ հեռուստալսարանը ներառող յուրաքանչյուր հանդիսատեսից՝ հեռուստահաղորդ(ումների)ման շրջանակներում վերջիններիս նկարահանելու համար ՀՀ օրենսդրությամբ պահանջվող բոլոր համաձայնությունները: Կողմերը համաձայնում են, որ Դերասանների կողմից կոնտենտ(ներ)ի շրջանակներում իսկ հանդիսատեսի կողմից հեռուստահաղորդ(ումների)ման շրջանակներում իրենց նկարահանելու իրավաչափության հետ կապված Պատվիրատուին պահանջ ներկայացվելու դեպքում,

Պատվիրատուն նման պահանջի քննությանը պետք է ներգրավի նաև Կատարողին, իսկ Կատարողը պարտավոր է հատուցել այդպիսի պահանջի ներկայացման հետ կապված Պատվիրատուի կրած բոլոր վնասները:

1.6. Կողմերն արձանագրում են, որ կոնտենտ(ներ)ի և հեռուստահաղորդ(ումների)ման նկարահանման օր(եր)ը, ժամ(եր)ը կամ նկարահանման տևողությունը որևէ կերպ չեն անդրադառնում սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման արժեքի վրա:

1.7. Կողմերն արձանագրում են, որ բոլոր այն դեպքերում, երբ հեռուստահաղորդ(ումների)ման նկարահանումները ավարտվում են ժամը 21:00–ից հետո, Պատվիրատուն իր միջոցներով հոգում է հանդիսատեսի տեղափոխումը նկարահանման վայրից դեպի կենտրեն վարչական շրջան՝ երիտասարդական մետրոյի կամ Օպերայի հարակից տարածք:

1.8. Կողմերը երաշխավորում և հավաստում են, որ իրավասու են ստորագրելու սույն Պայմանագիրը և ունեն սույն Պայմանագիրը կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, թույլտվությունները և համաձայնությունները:

1.9. Սույն Պայմանագրով նախատեսված պայմանները տարածվում են Կողմերի միջև մինչև Պայմանագրի ստորագրումը առաջացած հարաբերությունների նկատմամբ, մասնավորապես 2022 թվականի հոկտեմբերի 01-ից առաջացած հարաբերությունների նկատմամբ:

1.10. Ծառայությունները ենթակա են մատուցման մինչև 2022թ.-ի դեկտեմբերի 31-ը: Սույն Պայմանագրով մատուցվելիք Ծառայությունների շրջանակներում ընդգրկվող առանձին գործողությունների կատարման ձևաչափը, եղանակները, ժամկետները Կողմերի կողմից համաձայնեցվում են Կողմերի՝ սույն Պայմանագրի կատարման համար պատասխանատու ներկայացուցիչների միջև տեղեկությունների փոխանակման միջոցով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*2.1. **Պատվիրատուն իրավունք ունի՝***

2.1.1. Կատարողից պահանջել սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունները մատուցել պատշաճ որակով, ամբողջությամբ և սույն Պայմանագրով սահմանված ժամկետում:

2.1.2. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը՝ պահանջելով տրամադրել Ծառայությունների մատուցման ընթացքի և որակի վերաբերյալ Պատվիրատուին հետաքրքրող տեղեկատվությունը:

2.1.3. Պահանջել Կատարողից աջակցել Պատվիրատուին Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը ստուգելիս, ինչպես նաև մատուցված Ծառայությունների արդյունքն ընդունելիս:

2.1.4. Սույն Պայմանագրով իր ակնկալած արդյունքին հասնելու նպատակով Կատարողին տալ Ծառայությունների մատուցմանը վերաբերելի ողջամիտ ցուցումներ:

2.1.5. Կատարողի կողմից Ծառայությունները թերություններով մատուցվելու դեպքում, երբ Կատարողը Պատվիրատուի սահմանած ողջամիտ ժամկետում չի վերացնում մատուցված Ծառայությունների արդյունքում հայտնաբերված թերությունները՝

i. Պատվիրել այլ անձի վերացնել Կատարողի թույլ տված թերությունները և պահանջել Կատարողից հատուցել այդպիսի թերությունների վերացման համար իր կատարած ծախսերը,

ii. Սույն Պայմանագրի 2.1.6 կետի ii ենթակետով սահմանված կարգով միակողմանի լուծել սույն Պայմանագիրը:

2.1.6. Միակողմանիորեն լուծել սույն Պայմանագիրը և պահանջել վնասների հատուցում, եթե՝

i. Կատարողը ժամանակին չի սկսում Ծառայությունների մատուցումը կամ Ծառայությունները մատուցում է այնքան դանդաղ, որ դրանց ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

ii. Ծառայությունների մատուցման ժամանակ ակնհայտ է դառնում, որ դրանք պատշաճ չեն մատուցվելու և առկա թերությունների վերացման համար Պատվիրատուի նշանակած ողջամիտ ժամկետում այդպիսի թերությունները Կատարողի կողմից չեն վերացվում,

iii. Կատարողն այլ կերպ թույլ է տալիս սույն Պայմանագրի էական խախտում:

2.1.7. Պահանջել Կատարողից ամբողջությամբ հատուցել Ծառայությունների մատուցման ընթացքում Պատվիրատուին պատճառված վնասը՝ ներառյալ բաց թողնված օգուտը:

2.2. ***Պատվիրատուն պարտավոր է՝***

2.2.1. Ողջամտության սահմաններում Կատարողին ապահովել սույն Պայմանագրի պատշաճ կատարման համար անհրաժեշտ պայմաններով, ներառյալ, բայց չսահմանափակվելով, Կատարողին տեղեկացնել կոնտենտ(ներ)ի նկարահանումների ժամի և վայրի մասին, ապահովել Դերասանների՝ նկարահանումների վայր մուտքի թույլտվությունը և այլն,

2.2.2. Աջակցել Կատարողին Ծառայությունները հանձնելիս,

2.2.3. Վճարել Կատարողին պատշաճ մատուցված Ծառայությունների համար սույն Պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետում:

2.3. ***Կատարողն իրավունք ունի՝***

2.3.1. Պատվիրատուից պահանջել ապահովել իրեն սույն Պայմանագրի 2.2.1 կետով սահմանված պայմաններով,

2.3.2. Պատվիրատուից պահանջել ընդունել պատշաճ մատուցված Ծառայությունները,

2.3.3. Պատվիրատուից պահանջել մատուցված Ծառայությունների դիմաց վճարել սույն Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետում, իսկ կետանցի դեպքում վճարել նաև՝ սույն Պայմանագրի 5.5. կետով սահմանված տույժը:

2.4. ***Կատարողը պարտավոր է՝***

2.4.1. Ծառայությունները մատուցել ամբողջությամբ, սույն Պայմանագրով նախատեսված ժամկետում և պատշաճ որակով,

2.4.2. Կատարել Ծառայությունների մատուցման կապակցությամբ Պատվիրատուի տված ողջամիտ ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն Պայմանագրին, կիրառելի օրենսդրության պահանջներին, ներառյալ, բայց չսահմանափակվելով, Դերասանների և/կամ հանդիսատեսի լուսանկարների, անձնական տվյալների (անուն, ազգանուն) տրամադրում,

2.4.3. Ապահովել Դերասանների և/կամ հանդիսատեսի մասնակցությունը կոնտենտ(ներ)ի, հեռուստահաղորդ(ումների)ման նկարահանում(ներ)ին և նկարահանում(ներ)ից առնվազն 30 (երեսուն) րոպե առաջ Պատվիրատուի՝ սույն Պայմանագրի կատարման համար պատասխանատու ներկայացուցչի կողմից նշված վայր, պատշաճ արտաքին տեսքով ներկայանալը,

2.4.4. Պատասխանատվություն կրել Ծառայությունների մատուցման ժամկետի խախտման համար՝ վճարելով սույն Պայմանագրի 5.2. կետով նախատեսված տույժը և հատուցելով կետանցով Պատվիրատուին պատճառված վնասները,

2.4.5. Սույն Պայմանագրի 2.1.6. կետով նախատեսված հիմքերով Պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել սույն Պայմանագրով նախատեսված տուժանքը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Սույն Պայմանագրով նախատեսված 18-50 (տասնութից հիսուն) տարեկան 1 (մեկ) հանդիսատեսի տրամադրման արժեքը կազմում է 3 175 (երեք հազար հարյուր յոթանասունհինգ), իսկ 50 (հիսուն) և ավել տարիքի 1 (մեկ) հանդիսատեսի տրամադրման արժեքը՝ 2 117 (երկու հազար մեկ հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ: Ծառայությունների արժեքը ներառում է բոլոր կիրառելի հարկերը, ինչպես նաև Ծառայությունների մատուցման համար Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

3.1.1. Կողմերն արձանագրում են, որ սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների՝ ընդհանուր արժեքը չի կարող գերազանցել 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամը: Սույն Պայմանագրով նախատեսված գինը ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և այլ պարտադիր վճարները:

3.1.2. Կատարողը պարտավորվում է սույն Պայմանագրի 3.1.1 կետով սահմանված գումարի չափով Ծառայություններ մատուցելուց հետո տեղեկացնել Պատվիրատուին Պայմանագրով համաձայնեցված գնային սահմանաչափի սպառման վերաբերյալ, սույն Պայմանագրի շրջանակներում չընդունել և չկատարել հեռուստալսարանի ապահովման նոր պատվերներ՝ մինչև հակառակի վերաբերյալ Կողմերի միջև գրավոր համաձայնության ձեռքբերումը:

3.2. Պատվիրատուն մատուցված Ծառայությունների դիմաց վճարումն իրականացնում է հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի երկկողմանի հաստատվելուց 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3. Սույն Պայմանագրով վճարումներն իրականացվում են անկանխիկ եղանակով՝ դրամական միջոցները Կատարողի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.4. Վճարման ամսաթիվ է համարվում Պատվիրատուի բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրման ամսաթիվը: Բանկային ծախսերը Պատվիրատուի բանկում կատարում է Պատվիրատուն, իսկ Կատարողի բանկում՝ Կատարողը:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

4.1. Ծառայությունների մատուցման ավարտից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը Պատվիրատուին ներկայացնում է իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը:

4.2. Հանձնման-ընդունման ակտը ներկայացնելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն Կատարողի աջակցությամբ ստուգում է մատուցված Ծառայությունների որակը:

4.3. Հանձնման-ընդունման ակտը սույն Պայմանագրի 4.2. կետում նշված ժամկետում ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունները համապատասխանում են Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման ակտը չի ստորագրվում և

i. Կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով հայտնաբերված թերությունների վերացման համար անհրաժեշտ և Կատարողի կողմից անհատույց մատուցման ենթակա Ծառայությունները և դրանց մատուցման ողջամիտ ժամկետները.

ii. Պատվիրատուն Կատարողի նկատմամբ կիրառում է սույն Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

4.4. Եթե Պայմանագրի 4.2. կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունների արդյունքը կամ չի մերժում դրանց ընդունումը, ապա մատուցված Ծառայությունները համարվում են ընդունված և Պայմանագրի 4.2. կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող առաջին աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը:

4.5. Եթե Պատվիրատուն Ծառայություններն ընդունում է առանց սույն Պայմանագրի 4.2. կետով սահմանված ժամկետում դրանց արդյունքների ստուգման, ապա զրկվում է Ծառայությունների այն թերությունները վկայակոչելու իրավունքից, որոնք կարող էին հայտնաբերվել մատուցված Ծառայությունների արդյունքը սովորական եղանակով ընդունելու ժամանակ (բացահայտ թերություններ):

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում մատուցված Ծառայությունների որակի և դրանց մատուցման ժամկետի պահպանման համար:

5.2. Ծառայությունների մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից կետանցի յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ Պայմանագրի ընդհանուր արժեքի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.3. Մատուցված Ծառայությունների արդյունքը Պայմանագրի 4.3. կետով նախատեսված հիմքով չընդունվելու, ինչպես նաև 2.1.6. կետով նախատեսված կարգով Պայմանագիրը լուծվելու դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր արժեքի 10 (տասը) տոկոսի չափով:

5.4. Պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարվող գումարներից:

5.5. Մատուցված Ծառայությունների համար վճարելու սույն Պայմանագրով սահմանված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից կետանցի յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան վճարման ենթակա գումարի 5 (հինգ) տոկոսը:

5.6. Տուժանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

5.7. Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

6.1. Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը ստորագրելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

6.2. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի համար դրանով նախատեսված պարտավորությունների ամբողջական և պատշաճ կատարումը:

7.2. Սույն Պայմանագիրը ստորագրող Կողմերի ներկայացուցիչները սույնով հաստատում են, որ ունեն բոլոր անհրաժեշտ լիազորությունները ստորագրելու սույն Պայմանագիրը և ներկայացնելու Կողմերին Պայմանագրով նախատեսված հարաբերություններում:

7.3. Կողմերից որևէ մեկն իրավունք չունի սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցել երրորդ անձի առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության:

7.4. Սույն Պայմանագրի յուրաքանչյուր կետ կամ պայման իրենից ներկայացնում է առանձին և ինքնուրույն դրույթ: Եթե Պայմանագրի որևէ դրույթ դատական կարգով կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ ճանաչվի անվավեր կամ կատարման ոչ ենթակա, ապա սույն Պայմանագրի մնացած բոլոր դրույթները կպահպանեն իրենց ուժը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

7.5. Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե այն կատարված է գրավոր և ստորագրված և կնքված է (կնիքի առկայության դեպքում) Կողմերի կողմից:

7.6. Սույն Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել սույն Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և հիմքերով, ինչպես նաև Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

7.7. Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ սույն Պայմանագրի վավերապայմաններում նշված ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու միջոցով կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով:

7.8. Սույն Պայմանագրի կատարման ընթացքում Կողմերից յուրաքանչյուրի անվանման, հասցեի, վճարման կամ այլ վավերապայմանների փոփոխության դեպքում, համապատասխան Կողմը պարտավոր է այդ մասին պատշաճ կերպով գրավոր ծանուցել մյուս Կողմին՝ այդպիսի փոփոխությունից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, հակառակ դեպքում՝ նախկինում տրամադրված վավերապայմաններով արված վճարումները, ուղարկված ծանուցումները համապատասխանաբար կհամարվեն ժամանակին կատարված կամ պատշաճ հասցեով ուղարկված:

7.9. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.10. Սույն Պայմանագրի առարկային վերաբերող և սույն Պայմանագրով ուղղակիորեն չկարգավորված բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

7.11. Պայմանագրով նախատեսված մի Կողմի իրավունքին համապատասխանում է մյուս Կողմի պարտավորությունը՝ ապահովելու այդ իրավունքի իրացումը:

7.12. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	Կատարող
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	«Ինդիվիդում կաստինգ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Բրյուսովի 19, բն. 19
ՀՎՀՀ՝ 01540062	ՀՎՀՀ՝ 02246615
«Ինեկոբանկ» ՓԲԸ	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 2050022082671001	Հ/Հ՝ 163018109914
Հ. Մովսիսյան	Ս. Հարությունյան
Գործադիր տնօրեն	*Տնօրեն*